ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

25 մայիսի 2026թ. **N 210-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ 18.05.2026թ. ԴԻՄՈՒՄ-ՀԱՂՈՐԴՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդևանյանի (այսուհետ նաև՝ դիմումատու) 18.05.2026թ. դիմում-հաղորդումը և ի լրումն նշված դիմում-հաղորդմանը ներկայացրած 21.05.2026թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը.

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդևանյանի 18.05.2026թ. դիմում-հաղորդմամբ նշվում է.

«հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքը ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ի թիվս այլնի, օժտել է բացառիկ իրավասությամբ՝ հանդես գալու որպես ընտրական գործընթացի օրինականության, ինչպես նաև նախընտրական քարոզչության ընթացքում օրենքով սահմանված կանոնների պահպանման գլխավոր երաշխավոր, սույն դիմումով Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում մեկնարկած նախընտրական քարոզարշավի ընթացքում տեղի ունեցող համակարգային այն խախտումներին, որոնք լրջագույնս վտանգում են ընտրական գործընթացի լեգիտիմությունը՝ ձևավորելով քաղաքական մրցակցության անհավասար պայմաններ:

Այսպես, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակը գլխավորող, ներկայումս ՀՀ վարչապետի կողմից իրականացվող նախընտրական քարոզչությունը դուրս է եկել քաղաքական բանավեճի և կարծիքի ազատ արտահայտման իրավական սահմաններից: Վերջինիս հրապարակային ելույթներում տեղ են գտել քաղաքական տարբեր ուժերին, այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը վարկաբեկող, հանրային թշնամանք հրահրող և կուսակցության ղեկավար անձանց արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ:

Մասնավորապես, 09.05.2026թ.-ին Կապանում տեղի ունեցած Հանրահավաքի ժամանակ Նիկոլ Փաշինյանն իր ելույթում հնչեցրել է հետևյալը.

«……Բայց էլի եմ ասում, ***պատերազմի եռագլուխ կուսակցությունը*** *ցնցումների մեջ է էս փաստից: Եվ ես ուզում եմ, որ դուք հստակ արձանագրեք, ովքեր են էդ պատերազմի եռագլուխ կուսակցությունը. դա նախկին, 2007, 2010, 2013 թվականի, չգիտեմ… նախկին էդ թվականների կոալիցիաներն են… Ռոբերտ Քոչարյան, Դաշնակցություն, Գագիկ Ծառուկյան, ԲՀԿ՝ իր թևերով… դա…էն…* ***և, հիմա՝ Ուժեղ Հայաստանը, որում ընդգրկված են նախ Սերժ Սարգսյանը, ուղիղ և բոլոր, Հանրապետական կուսակցությունը ուղիղ ձևերով ներգրավված է և աջակցում է****… էլ չեմ ասում Կալուգացի օլիգարխի եղբայրը, Սերժ Սարգսյանի աշխատակազմի ղեկավարը և նաև Հանրապետական խմբակցության ղեկավարն ա եղել:*

Եվ ես ուզում եմ ձեզ ասել, որ ***ի դեմս պատերազմի եռագլուխ կուսակցության, գործ ունենք նախորդ հանցավոր մաֆիայի հետ****, որը դուրս ա եկել վերջին մարտի… հասկանալով, որ այլևս ոչ մարտի 1-ը, ոչ մյուս հանցագործությունների պատժից, ոչ թալանածը մինչև վերջին կոպեկը վերադարձնելուց չեն կարողանալու խուսափել… նրանք, Ռոբերը Քոչարյան, Սերժ Սարգսյան, Գագիկ Ծառուկյան,* ***նաև կալուգացի օլիգարխը, դուրս են եկել վերջին մարտի, որպեսզի ձեզնից խլեն ձեզ պատկանող իշխանությունը…*** *բայց ես համոզված եմ՝ դուք դա թույլ չեք տալու, դուք դա թույլ չեք տալու… որովհետև, ես չեմ կարող հավատալ, որ դուք ձեզ պատկանող իշխանությունը կզիջեք* ***քրեաօլիգարխիկ ռեժիմի****……»:*

Նախ, վերը նշված ելույթով «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը վերագրվում է նախկին կառավարման տարիների ընթացքում գոյություն ունեցող քաղաքական կոալիցիաների, ինչպես նաև որոշակի գործընթացներին մասնակցություն, ինչը չի համապատասխանում իրականությանն այն պարզ պատճառով, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը հայաստանյան քաղաքական դաշտում նոր ուժ է և հիմնադրվել է 2025թ.- ին, ինչի մասին, մեր գնահատմամբ, Նիկոլ Փաշինյանը, որպես քաղաքական գործիչ, չէր կարող չիմանալ: Ուստի գիտակցելով, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը չի կարող համարվել 2010 կամ 2013 թվականների քաղաքական կոալիցիաների մաս, միաժամանակ հաստատապես նման հայտարարություններ կատարելը ոչ այլ ինչ է, քան ընտրողի ազատ կամահայտնության ձևավորման վրա բացասական ազդեցություն՝ պայմանավորված սուտ և իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության տարածմամբ:

Ընդ որում պետք է նշել, որ կեղծ տեղեկությունների տարածման արշավն առավել ինտենսիվ է հենց «Ուժեղ Հայաստան» կուսակցության նկատմամբ, ինչը, մեր գնահատմամբ պայմանավորված է նաև տարբեր հարցումների արդյունքներում ամենամեծ ընդդիմադիր ուժ հանդիսանալու և կարճ ժամանակահատվածում հանրային վստահություն վայելող կուսակցություն համարվելու հետ, որպիսի

պարագայում, փաստորեն, օգտագործվում է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության տարածմամբ կուսակցության վերաբերյալ հանրային սխալ ընկալում ձևավորելու մարտավարությունը, ինչն անթույլատրելի է և որևէ պարագայում չի կարող համարվել նախընտրական քարոզչություն:

Հաջորդիվ, անդրադառնալով նշված ելույթում օգտագործված եզրույթաբանությանը հարկ է նկատել, որ «**հանցավոր մաֆիա», «քրեաօլիգարխիկ ռեժիմ», «պատերազմի եռագլուխ կուսակցություն» արտահայտությունները** որևէ կերպ չեն կարող համարվել որևէ քաղաքական կուսակցության նախընտրական ծրագրի կամ տեսլականի վերաբերյալ գնահատողական դատողություններ. **նշված արտահայտությունները միանշանակ միտված են ընտրողների շրջանում բացասական էմոցիաների, վախի, ատելության և ագրեսիայի հրահրմանը՝ այլ քաղաքական ուժերի, այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության նկատմամբ:**

Ավելին, ընդդիմադիր ուժերին **«պատերազմի եռագլուխ կուսակցություն»** անվանելը և պնդելը, թե նրանք դուրս են եկել **«վերջին մարտի՝ իշխանությունը խլելու»,** հասարակությանը հոգեբանորեն նախապատրաստում է քաղաքացիական բախումների և սերմանում է ներհասարակական ատելություն: Այս առումով կարծում ենք ավելորդ չէ ընդգծել, որ վերջին տասնամյակներում մի քանի աղետալի պատերազմների միջով անցած հասարակությանը նոր պատերազմի վտանգով և արհավիրքներով վախեցնելը հանդիսանում է հանրային հոգեբանական ճնշման բացասական դրսևորում: Նման հետտրավմատիկ սթրեսի մեջ գտնվող հասարակության գիտակցության մեջ որևէ քաղաքական ուժի նպատակաուղղված և առանց որևէ հիմնավորման որպես «պատերազմի կուսակցություն» անվանելը՝ անթույլատրելի պիտակավորում է: **Դա, մեր գնահատմամբ, արվում է գիտակցված՝ ընտրողին զրկելու ռացիոնալ ընտրություն կատարելու հնարավորությունից և նրան բացարձակ հոգեբանական կախվածության մեջ** գցելու նոր պատերազմի վախի զգացումից:

Հաջորդիվ, 2026 թվականի մայիսի 18-ին ԶԼՄ-ներում հրապարակված տեսանյութում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակը գլխավորող, ներկայումս ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի կողմից հրապարակավ հայտարարվել է.

«…Դուք վախկոտ համբալներ եք, ովքեր փախել են մարտադաշտից, հանեք Ձեր մասկեքը…չոքցնելու եմ սաղիդ, հատ հատ մասկեքը կոխելու եմ համապատասխան տեղերդ…չոքցնելու եմ սատկացնելու եմ… Կալուգացուն էլ եմ կզցնելու, սատկացնելու եմ, չոքացնելու եմ…ողորմելին դուք եք…Ղարաբաղով թալանել եք…»:

Գտնում ենք, որ ակնհայտ է, որ ընտրություններին մասնակցող կուսակցության կամ թեկնածուի կողմից նախընտրական քարոզչության ընթացքում ցանկացած

կոնտեքստով, անձնավորված կամ անորոշ թվով անձանց ուղղված, որոշակի կամ անորոշ ձևակերպմամբ վերը շարադրված մտքերը պարունակող արտահայտություններն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող են ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիք: Տվյալ դեպքում նաև ընդգծված թիրախավորում է նկատվում Արցախի (Լեռնային Ղարաբաղի) բնակիչների թիրախավորումը: Այսինքն Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից վերը նշված տեսաձայնագրություններում հնչեցված արտահայտություններն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող էին ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիքներ և/կամ ատելության խոսք: Ուստի Հանձնաժողովը ելնելով իր նաև ընտրությունների օրինականության վերահսկողության լիազորություններից, այդ թվում Ընտրական օրենսգրքի տեսանկյունից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումը գնահատելու մասով, քանի որ այդպիսի արտահայտությունը հնչեցվել է նախընտրական քարոզչության ընթացքում: Ավելին տվյալ դեպքում Հանձնաժողովից չի ակնկալվում գրաքննող լիազորության ստանձնումը, այլ նման վարքագծի իրավական գնահատական տալը:

Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կողմից իրականացվող նախընտրական քարոզչությունն ուղղված է ընտրողների վստահությունը ձեռք բերելուն (ամրապնդելուն) և այդ իմաստով իրապես անհրաժեշտ է պարզել «չոքցնելու եմ սաղիդ, հատ հատ մասկեքը կոխելու եմ համապատասխան տեղերդ…չոքցնելու եմ սատկացնելու եմ», նախընտրական քարոզչության ինչ ձևաչափ է հանդիսանում: Արդյո՞ք նման ձևակերպումները քաղաքական ուժի ծրագրային դրույթ են հանդիսանում և ինքնին ատելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու, խտրականությունը խրախուսելու վարքագիծն ինքնին քարոզչություն է հանդիսանում:

Միջազգային իրավական փաստաթղթերում միանշանակ արձանագրված է այն դիրքորոշումը, ըստ որի՝ ընտրական իրավունքի ազատությունը չի սահմանափակվում զուտ կոնկրետ ընտրողի կամահայտնության վրա անմիջական ազդեցությամբ, այն ավելի լայն շրջանակներ է ընդգրկում և ներառում է նաև այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են՝ հետապնդումները, թշնամության և ատելության ոճաբանությունը, վարչական ռեսուրսների օգտագործմամբ նախընտրական քարոզչության համար չնախատեսված ամբիոններն օգտագործելը և այլն:

Սահմանադրական դատարանն իր հերթին, ՍԴՈ թիվ 1606 որոշմամբ արձանագրել է, որ *ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը և դրանց ներկայացուցիչները նախընտրական քարոզչության ընթացքում օգտվում են իրենց կարծիքն արտահայտելու լայն հնարավորություններից, ինչը ժողովրդավարական հասարակությունում հնարավորություն է տալիս ազատորեն ձևավորելու ժողովրդի կամքը, ուստի՝ այն ընտրությունների ազատության սկզբունքի ապահովման*

անհրաժեշտ պայման է: Այդուհանդերձ, նախընտրական քարոզչությունը չի կարող ուղեկցվել ատելության, բռնության կոչերով և սպառնալիքներով (եթե անգամ այդ սպառնալիքն իրական չէ), որոնք խաթարում են խաղաղ և առողջ սոցիալական միջավայրը: Քաղաքական ուժերը և դրանց ներկայացուցիչները պետք է նախընտրական քարոզչության ընթացքում դրսևորեն առավելագույն զսպվածություն, քաղաքական կոռեկտություն՝ բացառելով ատելության, բռնության ցանկացած կոչ ու սպառնալիք և արժանապատվությունը նվաստացնող ցանկացած վարքագիծ:

Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, *որ Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կողմից իրականացվող նախընտրական քարոզչությունն ուղղված է ընտրողների վստահությունը ձեռք բերելուն (ամրապնդելուն): Այդ գործընթացում առանցքային դեր պետք է կատարի տնտեսական, սոցիալական, պաշտպանական և այլ բնագավառներում քաղաքական ուժերի ծրագրային դրույթների մասին ընտրողների իրազեկումը և այդ դրույթների առարկայական քննարկումը՝ չբացառելով նախընտրական քարոզչության ժամանակ սուր քննադատական խոսքը, որը, սակայն, չպետք է ուղեկցվի ատելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքով և վարքագծով: Ընդ որում, նշված գործընթացի արդյունավետության ապահովման հարցում մեծ դերակատարում ունեն ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերը:*

Այս դեպքում այլևս, որոշակի տևողությամբ և ինտենսիվության բարձրացմամբ ակնհայտորեն գործ ունենք ատելության խոսքի, բռնության կոչերի տարածման և հանրային թշնամանքի բորբորքման հետ, որպիսի պարագայում ընտրողների ազատ քաղաքական կամքի ձևավորումը ենթարկվում է անհամաչափ ճնշումների և միջամտության: Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի կարգավորումների և լիազորությունների շրջանակներում անհրաժեշտ գործողություններ պետք է ձեռնարկի՝ իրացնելով նախատեսված գործիքակազմերը:»:

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդևանյանի կողմից ներկայացվել է նաև 21.05.2026թ. դիմումը, որը վերնագրված է «Ի ԼՐՈՒՄՆ 18.05.2026Թ.-ի ԴԻՄՈՒՄ-ՀԱՂՈՐԴՄԱՆ», որում նշված է.

«Ի լրումն նախկինում ներկայացված դիմում-հաղորդման՝ անհրաժեշտ ենք համարում հավելյալ անդրադառնալ ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) մի շարք կարգավորումներին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գործընթացի օրինականության ապահովման շրջանակներում ունեցած անմիջական պարտականություններին:

Օրենսգրքի 19-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ նախընտրական քարոզչություն է համարվում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին:

Տվյալ դեպքում ակնհայտ է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակը գլխավորող Նիկոլ Փաշինյանի կողմից հրապարակային ելույթներում հնչեցված արտահայտությունները կատարվել են նախընտրական քարոզչության շրջանակներում և ուղղված են եղել ընտրողների քաղաքական վարքագծի վրա ազդեցություն ունենալուն, այդ թվում՝ ընդդիմադիր քաղաքական ուժերի նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորելուն և դրանց օգտին չքվեարկելուն:

Միաժամանակ, հրապարակայնորեն հնչեցված՝ «չոքցնելու եմ», «սատկացնելու եմ», «մասկեքը կոխելու եմ համապատասխան տեղերը», «հանցավոր մաֆիա», «քրեաօլիգարխիկ ռեժիմ», «պատերազմի եռագլուխ կուսակցություն» և համանման արտահայտությունները որևէ կերպ չեն կարող դիտարկվել որպես քաղաքական ծրագրերի կամ գաղափարական տարաձայնությունների շրջանակում թույլատրելի քաղաքական քննադատություն:

Նշված արտահայտությունները օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող են ընկալվել որպես՝

- բռնության կիրառման սպառնալիք,
- քաղաքական հակառակորդների նկատմամբ ատելության և թշնամանքի հրահրում,
- արժանապատվությունը նվաստացնող վարքագիծ,
- ընտրողների հոգեբանական ճնշման և վախի մթնոլորտի ձևավորում:

Հատկանշական է նաև, որ նման հռետորաբանությունը կրում է շարունակական բնույթ և պարբերաբար վերարտադրվում է տարբեր հանրային ելույթներում և քարոզչական միջոցառումներում՝ էական ազդեցություն ունենալով ընտրական գործընթացի բնականոն ընթացքի և ընտրողների ազատ քաղաքական կամքի ձևավորման վրա:

Օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող

կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին:

Տվյալ դեպքում արձանագրվող վարքագիծը չի հանդիսանում մեկանգամյա կամ պատահական դրսևորում, այլ կրում է շարունակական և համակարգային բնույթ՝ ուղեկցվելով քաղաքական հակառակորդների թիրախավորմամբ, ապամարդկայնացմամբ և հանրային թշնամանքի բորբոքմամբ:

Բացի այդ, Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ: Արգելվում են նախընտրական քարոզչության կազմակերպման և իրականացման ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների, նյութական և մարդկային ռեսուրսների օգտագործումը ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու նպատակով:

Նիկոլ Փաշինյանը հանդիսանում է ոչ միայն ընտրություններին մասնակցող կուսակցության նախընտրական ցուցակը գլխավորող թեկնածու, այլ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետ, և նրա կողմից իրականացվող քարոզչական գործունեությունն ակնհայտորեն ուղեկցվում է վարչապետի պաշտոնական կարգավիճակից բխող վարչական և կազմակերպչական ռեսուրսների օգտագործմամբ, ինչը պահանջում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առանձին իրավական գնահատականը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք՝

1. ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով հարուցել համապատասխան վարույթ (ուսումնասիրություն)՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի հնարավոր խախտման փաստով:

2. Տալ իրավական գնահատական Նիկոլ Փաշինյանի կողմից նախընտրական քարոզչության ընթացքում հնչեցված արտահայտություններին՝ ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի, ՀՀ Սահմանադրության և Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1606 որոշման լույսի ներքո:

3. Հիմք ընդունելով վերաբերելի օրենսդրական կարգավորումները՝ քննարկման առարկա դարձնել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և դրա

նախընտրական ցուցակը գլխավորող թեկնածու Նիկոլ Փաշինյանի նկատմամբ հնարավոր պատասխանատվության միջոցների հարցը:

4. Ուսումնասիրել նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ վարչական ռեսուրսի օգտագործման հնարավոր խախտումների առկայությունը:

5. Անհրաժեշտության դեպքում դիմել իրավասու մարմիններին՝ քարոզչության ընթացքում հնչեցված արտահայտությունների իրավական գնահատական ապահովելու նպատակով:»:

Դիմումատուն ներկայացրել է նաև իր նույնականացման քարտի, փաստաբանական գործունեության արտոնագրի և լիազոր ներկայացուցչի վկայականի պատճենները:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդևանյանի 18.05.2026թ. դիմում-հաղորդմամբ և ի լրումն ներկայացված 21.05.2026թ. դիմումով (այսուհետ միասին՝ Դիմում) հարուցված վարչական վարույթով հրավիրված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 25-ի ժամը 18:00-ի նիստին ներկայացել է դիմումատու՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդևանյանը:

Դիմումատուն նիստին ներկայացրեց իր դիրքորոշումները: Նշեց նաև, որ, չվերարտադրելով Դիմումում նշված արտահայտությունները, գտնում է, որ նախընտրական քարոզչության շրջանակներում քաղաքական ուժերը պետք է ներկայացնեն իրենց ծրագրային դրույթները: Դիմումատուն վերահաստատեց նաև իր դիրքորոշումն առ այն, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի իրականացնում նախընտրական քարոզչության բովանդակության գրաքննություն, ընդգծեց, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից ակնկալում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից Դիմումում նշված բառամթերքի կիրառման համար պատասխանատվության միջոցի կիրառում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 25-ի ժամը 18:00-ի նիստին ներկայացած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչ Սուրեն Գրիգորյանը ներկայացրեց իր դիրքորոշումները՝ հայտնելով, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից Դիմումում նշված բառամթերքով տրվել են սուր և կոշտ գնահատականներ, հնչեցվել է ուղիղ և կոշտ քննադատություն: Սուրեն Գրիգորյանը նաև հավելեց, որ Դիմումում մատնանշված հրապարակային

ելույթներն ուղղված են եղել բռնության կոչով հանդես եկող մի խումբ անձանց և կոչ արեց չվերագրել այդ խոսքերը հասարակության լայն շրջանակներին: Ս.Գրիգորյանը նշեց, որ Դիմումում վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ փաստեր ներկայացված չլինելու պատճառով հնարավորություն չունի դրանց անդրադառնալու:

Ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը և լսելով կողմերի բացատրություններն ու դիրքորոշումները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանգել է հետևյալին.

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 19-րդ հոդվածի 1-ին, 1.1-րդ և 2-րդ մասերի համաձայն.

«1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ ժամանակահատվածում քարոզչությունը ստորև անվանվում է նախընտրական քարոզչություն:

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլի դեպքում նախընտրական քարոզչությունն սկսվում է ընտրության երկրորդ փուլ անցկացնելու մասին որոշման կայացումից հետո՝ ութերորդ օրվանից:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակմամբ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից, ինչպես նաև համացանցում գովազդի միջոցով արգելվում է:

1.1. Սույն օրենսգրքի իմաստով՝ նախընտրական քարոզչություն է համարվում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին: (…)

2. Պետությունն ապահովում է նախընտրական քարոզչության ազատ իրականացումը: Այն ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով նրանց դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով: Դրանք Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրվում են հավասար հիմունքներով, անվճար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Հանրակրթական ուսումնական հաստատությունների դահլիճները թեկնածուներին ու ընտրություններին մասնակցող կուսակցություններին կարող են տրամադրվել միայն ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին և միայն այն դեպքերում, եթե տվյալ բնակավայրում (Երևանի վարչական շրջանում) գոյություն չունեն նախընտրական քարոզչության անցկացման համար համապատասխան այլ դահլիճներ:»:

Նույն հոդվածի 7-րդ հդվածի համաձայն՝ «7. Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին:»:

Վերը նշված իրավակարգավորումների ներքո՝ անդրադառնալով դիմումով արծարծվող հանգամանքներին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումատուն հղում է կատարում ընտրություններին մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի հրապարակային ելույթներում տեղ գտած արտահայտություններին:

Ընտրական օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների

դաշինքի) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին:

2. Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել:»:

Ընտրական օրենսգիրքը թույլատրելի է համարում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը կողմ կամ դեմ քվեարկելուն միտված քարոզչությունը, այդ թվում՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ նախընտրական քարոզչության միջոցների և քարոզչական նյութերի, հայտարարությունների, կոչերի բովանդակությունը որոշում է քարոզչություն իրականացնողը, և դրա կապակցությամբ Ընտրական օրենսգիրքը որևէ սահմանափակում չի նախատեսում, քան Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածով նախատեսված՝ հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների համար սահմանված նախընտրական քարոզչության իրականացման սահմանափակումների, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ և 6.1-րդ մասերով թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կազմակերպությունների համար նախատեսված սահմանափակումների:

Դիմումում ներկայացվող հանգամանքներում Ընտրական օրենսգրքով հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուների կողմից Ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումների խախտմամբ նախընտրական քարոզչության իրականացման վերաբերյալ տեղեկություններ ներկայացված չեն:

Դիմումատուն նախընտրական քարոզչության բովանդակության գնահատմամբ Դիմումում ներկայացվող քարոզչությունը որակում է որպես քարոզչություն, որն իրականացվել է նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտմամբ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ սույն Դիմումի փաստերի համատեքստում կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների կողմից իրականացվող նախընտրական քարոզչության բովանդակության գնահատումը, այն էլ առանց օրենքով հստակ սահմանված սահմանների առկայության կամ ամրագրված չափորոշիչների, հնարավորություն կտա ամենատարբեր սուբյեկտիվ որակումներ տալու համար՝ հանգեցնելով ցանկացած հայտարարության և քարոզչական նյութի, ընդհուպ՝ գրաքննության, ինչի վտանգի մասին առկա է նաև մատնանշում նաև Դիմումում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերոհիշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում նաև փաստում է, որ խոսքի ազատությունը բարձրագույն արժեք է, որի պահպանումը հատկապես կարևոր է քարոզարշավների

ժամանակ, այդուհանդերձ, արձանագրում է, որ այն չի կարող մեկնաբանվել որպես բացարձակ իրավունք: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդգծում է, որ թեկնածուների կողմից հնչեցվող խոսքում, հրապարակային ելույթներում և այլ քարոզչական նյութերում հնարավոր քրեական պատասխանատվության հանգեցնող կոչերն ու հայտարարությունները ենթակա են գնահատման իրավապահ մարմինների կողմից և կարող են հադիսանալ այլ վարույթների առարկա:

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին կոնվենցիայի[1] (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Քաղաքացիների, թեկնածուներին, թեկնածուներ և (կամ) թեկնածուների ցուցակներ առաջադրած քաղաքական կուսակցություններին (դաշինքներին), այլ հասարակական միավորումներին, հասարակական կազմակերպություններին երաշխավորվում է օրենքով թույլատրելի ցանկացած ձևով և օրինական մեթոդով քարոզչական գործունեության անցկացման ազատություն՝ օրենքներով նախատեսված կարգով և ժամկետներում, բազմակարծության, գրաքննության բացակայության պայմաններում:»:

ՀՀ սահմանադրական դատարանն՝ իր 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշմամբ անդրադառնալով ազատ ընտրություններին և արտահայտվելու ազատությանը, նշել է. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով վերը նշված դրույթներին, նշել է, որ ազատ ընտրությունները և արտահայտվելու ազատությունը, մասնավորապես քաղաքական բանավեճի ազատությունը, միասին կազմում են ցանկացած ժողովրդավարական համակարգի հիմքը (Mathieu-Mohin and Clerfayt v. Belgium, 2 March 1987, § 47; the Lingens v. Austria, 8 July 1986, §§ 41-42): Երկու իրավունքները փոխկապակցված են և գործում են միմյանց ամրապնդման համար. օրինակ՝ խոսքի ազատությունը «օրենսդրի ընտրության հարցում ժողովրդի կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու» համար անհրաժեշտ «պայմաններից» մեկն է (Mathieu-Mohin and Clerfayt, § 54): Այդ պատճառով ընտրություններին նախորդող շրջանում հատկապես կարևոր է, որ բոլոր տեսակի կարծիքներն ու տեղեկությունները թույլատրվեն ազատ շրջանառվել: Ընտրական բանավեճերի համատեքստում թեկնածուների կողմից խոսքի ազատության անխոչընդոտ իրացումն առանձնահատուկ նշանակություն ունի (Kudeshkina v. Russia, 26 February 2009, § 87):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը և դրանց ներկայացուցիչները նախընտրական

---

[1] *Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 17.03.2005: Աղբյուրը՝ https://www.arlis.am/hy/acts/24616/latest:պ*

քարոզչության ընթացքում օգտվում են իրենց կարծիքն արտահայտելու լայն հնարավորություններից, ինչը ժողովրդավարական հասարակությունում հնարավորություն է տալիս ազատորեն ձևավորելու ժողովրդի կամքը, ուստի՝ այն ընտրությունների ազատության սկզբունքի ապահովման անհրաժեշտ պայման է:

Այդուհանդերձ, նախընտրական քարոզչությունը չի կարող ուղեկցվել ատելության, բռնության կոչերով և սպառնալիքներով (եթե անգամ այդ սպառնալիքն իրական չէ), որոնք խաթարում են խաղաղ և առողջ սոցիալական միջավայրը: Քաղաքական ուժերը և դրանց ներկայացուցիչները պետք է նախընտրական քարոզչության ընթացքում դրսևորեն առավելագույն զսպվածություն, քաղաքական կոռեկտություն՝ բացառելով ատելության, բռնության ցանկացած կոչ ու սպառնալիք և արժանապատվությունը նվաստացնող ցանկացած վարքագիծ:»:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ոչ մի թեկնածու, ոչ մի քաղաքական կուսակցություն (դաշինք), ոչ մի այլ հասարակական միավորում կամ կազմակերպություն իրավունք չունի օգտագործելու հոգեբանական, ֆիզիկական, կրոնական հարկադրանքի մեթոդներ կամ բռնության կոչեր, բռնության կիրառման սպառնալիքներ կամ ցանկացած այլ տեսակի հարկադրանք:»:

ՀՀ վարչական դատարանի 2021 թվականի հունիսի 17-ին թիվ ՎԴ/6861/05/21 վարչական գործով կայացված վճռով վարչական դատարանն արձանագրել է, որ «միայն այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով ընտրական հանձնաժողովներին իրավասություն է վերապահում հսկելու նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը, ինքնին չի կարող բացառել առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի՝ Կոնվենցիայի ուղղակի կիրառելիությունն այն հարաբերությունների նկատմամբ, որոնք վերաբերում են նախընտրական քարոզչության կարգին և դրա խախտման իրավական հետևանքներին՝ առավել ևս, որ նույն Կոնվենցիան հստակ չափանիշներ է սահմանում ազատ ընտրությունների համար:»:

Հաշվի առնելով ՀՀ վարչական դատարանի նշված դիրքորոշումն առ այն, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ հոգեբանական, ֆիզիկական, կրոնական հարկադրանքի մեթոդների կամ բռնության կոչերի, բռնության կիրառման ապառնալիքների կամ ցանակացած այլ տեսակի հարկադրանքի օգտագործումն ընտրություններին մասնակցող կուսակցությունների կամ թեկնածուների կողմից նախընտրական քարոզչության ընթացքում հանգեցնում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված հետևանքին, սույն վարչական վարույթի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, գնահատելով Դիմումով ներկայացված հանգամանքներում

հնչեցված բառապաշարը, գտնում է, որ թեև նախընտրական քարոզչության շրջանակներում զսպվածության, քաղաքական կոռեկտության համատեքստում չէ, այնուամենայնիվ, չի առաջացնում «հոգեբանական, ֆիզիկական, կրոնական հարկադրանքի մեթոդների կամ բռնության կոչերի, բռնության կիրառման սպառնալիքների կամ ցանկացած այլ տեսակի հարկադրանքի» ընկալում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ Դիմումով ներկայացված հանգամանքներում նախընտրական քարոզչության Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի խախտում առկա չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդևանյանի Դիմումով ներկայացված հանգամանքներում նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում առկա չէ:

2. «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդևանյանի Դիմումը՝ «քննարկման առարկա դարձնել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և դրա նախընտրական ցուցակը գլխավորող թեկնածու Նիկոլ Փաշինյանի նկատմամբ հնարավոր պատասխանատվության միջոցների հարցը» և «դիմել իրավասու մարմիններին՝ քարոզչության ընթացքում հնչեցված արտահայտությունների իրավական գնահատական ապահովելու նպատակով» պահանջների մասով, մերժել:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակելու պահից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի մայիսի 25
ք. Երևան